## 144. ՊԸԼԸՊՈՒՂՈՒՆ ԽՈՍԿԸ

*Մելիքյ-Շահնազարեն վախտը Պըլըպուղուն անումը շատ ա ձեր ինո̈ւմ։ Խաբարը հանում ա ըխշարքնա չորս ա̈նգյո̈նը, վըեր Ղարաբաղումը իսկի մին խըելունք մարթ կա։ Էտ վախտը օրիշ երգյիրա մին քանի շատ խելունք, իմաստուն մարթիքյ ըն կյամ Պըլըպուղուն կոշտը, վըեր փորցեն տեհնան դո՞ւզ ըն ասում, թա լինա̃ Պըլըպուղուն անա քյո̈ւհեր ըն անում։*

*Պըլըպուղուն վըեր ծեն ըն տամ, էտ մարթիքյը Մելիքյ-Շահնազարեն նհետ նստած ըն ինո̈ւմ։ Տհանցա մինը մին ճըժ ա քաշում, օզում ա Պըլըպուղուն ասե, վըեր էս սաղ ախշարքըս ա, լոխ յամաք ա՞, թա ճո̈ւր էլ կա։ Պըլըպուղին յոր ա օնում էտ ճըժեն մաշավը մին խա̈զ քաշում։ Տահանք գյուդում ըն, թա Պըլըպուղին կլո̈խ ա ինգյալ, վըեր ախշարքըս մենակ ցամաք չի, օրիշ շատ տըեղեր ճո̈ւր էլ կա, տրա հետե յել ճըժեն մաշավը խա̈զ ա քաշալ։ Էտ մարթը մինգյել հափուռն ա չա̈նգյ ըրած կլխըլեր անում, սարավ օզում ա Պըլըպուղուն խա̈փի, վըեր ախշարքը պո̈ւլո̈ւր չի, փոս ա՝ Պըլըպուղին էլ ո̈իրա̈ն հափուռն ա չա̈նգյ ըրած կլխուլըեր անում, տինո̈ւմ նրա հափըռեն յերա̃, տա յել գյո̈ւդո̈ւմ ա, թա Պըլըպուղին կլխ ա ինգյա̈լ, վըեր ո̈իրա̈ն օզում ա խա̈փի, ամմա դե*

գյո̈ւղո̈ւմ ա, վըեր ախշարքը պո̈ւռո̈ւր .ա, տրա հետ յել ծ̈ըրա̈ն հափուռը կլխավըեր ըրած չա̈նգյ ա ըրալ, տիրա̈լ նրա̈ չա̈նգյ ըրած հափըռեն յիրա̈։ Էտ մարթը մինգյել ծ̈ըրա̈ն մին մանն ա ցեց օնում, էս դը̈նո̈ւմն էլ ա օղում Պըլըպուղուն խա̈փի, վըեր սաքավ թա յիրգյինքյումը ըխշարքես մին իշեղ անող կա՝ Պըլըպուղին էլ վըեր ծ̈ըրա̈ն էրկու մանն ա ցեց օնում, տահանք գյո̈ւղո̈ւմ ըն, թա արտեն կլո̈խ ա ինգյա̈լ, վըեր յիրգյինքյումը մին իշեղ անող չի, էրկումն ա՝ իրիյնակն ան լո̈ւսնո̈ւնգյա̈ն։

Տահանք վըեր քյինամ ըն, Մելիքյ-Շահնազարը Պըլըպուղուն ծեն ա տամ, հրցընում, թա նահանց քաշած ճըժան, չա̈նգյ ըրած հափըռան, ցեց կալած մաննան հի՞նչ կլո̈խ ինգյիր։ Պըլըպուղին էլ սսում ա.—Ճըժը՛ վըեր քաշից, ես գյիդա̈ցե, վըեր միժմա̈հի յա նկարում, համել հրցնում, թա մաշին մենակ ուտելի պեն ա ինո̈՞մ, թա խմելի յել ա ինո̈ւմ, ես էլ մաշավը խըղեցե, ըսեցե, վըեր մին ա̈նգյո̈նը ուտելի յա ինո̈ւմ, մին ա̈նգյո̈ւնն էլ կյինի։ Հափուռը վըեր չա̈նգյ ըրած կլխըյեր ըրավ, սսեց, վըեր մին կյեվաթ մածուն ինի, հու՞նց կըպահես, ես էլ իմ հափուռըս չա̈նգյ ըրե, տիրի ծ̈ը-րա̈ն հափռեն յիրա̈, տրանավ եմ ըսեցե, վըեր կըըվաթեն ըըխեն օրիշ աման կըտինիմ, հանցու մըեր կատուն կյավուշ մածունն ուտի։ Մանն էլ վըեր ցեց կըցըրավ, օղում ար սսե, վըեր ես քու աշկեռ մինը տո̈ւս կօնեմ, իմ էրկու մաննըս էլ վըեր ցեց կցըրե, ըսեցե ես էլ քու էրկու աշկըռ տո̈ւս կօնեմ։